

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/5

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիանա Աթոյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 295372/01 որոշման դեմ:

Ա/Ձ Լիանա Աթոյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.09.2015 թ-ին կայացվել է թիվ 295372/01 որոշումը՝ անհատ ձեռնարկատեր Լիանա Աթոյանին վարչական տույժի ենթարկելու մասին և նրա նկատմամբ կիրառվել է տուգանք 20000 դրամի չափով, հաշվի առնելով, որ նա 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետից ուշ է ներկայացրել:

Նշվածի հետ գանգատաբերը համաձայն չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Լիանա Աթոյանի կողմից երկու օր ուշացումով է ներկայացվել 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը հարգելի պատճառներով, քանի որ նրա հետ պատահել էր դժբախտություն և նա գտնվում էր Վայք քաղաքում:

Նրա կողմից 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը ներկայացվել է առձեռն՝ երկու օր ուշացումով, սակայն այն չի ընդունվել, որից հետո ներկայացվել է փոստով՝ 27.07.2015 թ-ին: Կից ներկայացվում է փոստային անդորրագիրը:

Գանգատարկվող որոշումը կայացնելիս վարչական մարմինը ղեկավարվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, սակայն իրականում անտեսվել է նշված հոդվածի պահանջները՝ հաշվի չի առնվել իրավախախտման բնույթը՝ մինչև օրս ներկայացվել է մեծամասամբ գրոյական հաշվետվություններ, քանի որ կազմակերպությունը իր գործունեության բնույթով նորություն է: Հաշվի չի առնվել նաև խախտողի անձն ու մեղքի աստիճանը, հատկապես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքը:

Վերոգրյալներից ելնելով և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287 և 288 հոդվածներով գանգատաբերը խնդրում է վերացնել վերը նշված որոշումը, քանի որ 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը ժամկետից երկու օր ուշացումով է ներկայացվել դժբախտություն պատահելու պատճառով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 03.09.2015 թ-ի 0389 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Լիանա Աթոյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի

